

ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահը ներկայացնում է “Downshift” ժամանակակից հավաքական ցուցահանդեսը:

«Downshift»-ի մեջ ներառված են 18 արվեստագետների աշխատանքներ, որը բացահայտում է «դանդաղ արվեստ»-ը և թե ինչպես արագության դանդաղումը նպաստում է մեր գիտակցության և ընկալման ուժեղացմանը:

Դանդաղեք: Նայեք: Լսեք: Նկատեք: «HAYP 9.0՝ Down_shift»-ի շրջանակում մենք պահանջում ենք արվեստագետներին (և մեր այցելուներին) դանդաղեցնել իրենց կյանքի ռիթմը, ժամանակավորապես ընդհատել իրենց սովորական առօրյան և չպատկերացնել ժամանակը որպես մի բան, որը պետք է լցնել, կիսել կամ արդյունավետ օգտագործել:

Ժամանակի արդյունավետ կառավարման փոխարեն մտածեք անարդյունավետ ժամանակի կամ ավելի ճիշտ արդյունավետ հապաղումների մասին: Մենք խոսում ենք ըմբռնողականության իրազեկման և ամենօրյա փոքրիկ բաները նկատելու մասին. ինչպիսիք են ձայնը ու հայացքը, հոտը ու հպումը, որոնք ձևավորում են մեր կյանքը: Մենք խոսում ենք ժամանակ հատկացնել ուշադրություն դարձնելու և ինքներս մեր մեջ մի պահ ընկղմվելու մասին: Դանդաղեցում հանուն բարձր իրազեկության:

Արվեստագետներ՝ Թենի Ադամյան, Անդրեյ Ամիռով, Յուդիթ Ապելթոն, Արամ Ադամյան, Նինա Բաղդասարյան, Նարեկ Բարսեղյան, Նայրա Բաուեր, Լուսինե Ղուկասյան, Գոռոդ Ուստինով, ՀԱՌԻԼ, Ֆլորենս Լոու, Սոնա Մանուկյան, Լիլիթ Մարկոսյան, Անի Մանու, Մերի Մուն, Սամվել Սաղաթելյան, Անյա Սմոլնիկովա, Բենյամին Թոմասին:

Տեղեկատվություն՝ Ապրիլի 7-17-ը, 2017թ. Ամեն օր, ժ.՝ 12:00 – 21:00 Մուտքն ազատ է	Հասցե՝ Հյուսիսային պողոտա 1, 2-րդ հարկ (մուտքը՝ Տերյան փողոցից («ՆՈՐԴ» քիզնես կենտրոն)):
---	---

Բացման արարողություն. ուրբաթ՝ ապրիլի 7-ին, համեցեք վայելելու Վարդան Հարությունյանի կենդանի երաժշտությունը և «[OLD BRIDGE](#)»-ի կողմից կազմակերպված գինու հյուրասիրությունը:

Ի՞նչ է ՀԱՅՓ Փոփ-ափ պատկերասրահը

ՀԱՅՓը շրջիկ պատկերասրահ է, որ ժամանակավոր ցուցադրություններ է կազմակերպում անկանխատեսելի վայրերում, ինչպիսիք են խանութի դատարկ կամ վարձույթով տրվող տարածքները, լքված գործարանները: Մենք ցանկանում ենք ավելի լայն հնարավորություններ ստեղծել սկսնակ արվեստագետների համար և փոխել մոտեցումները արվեստի արժեքի և տարածության նկատմամբ՝ դինամիկ մատուցման շնորհիվ բազմազան տիպի համայնքներ ներգրավելով: